

ԳԻՏՈՒԹԻՒՆ ԵՒ ԱՐՈՒԵՍՏ

ԹՈՔԱԽՏԻ ԴԷՄ ՆՈՐ ԴԵՂ

Իտալական մասնագիտական թերթերը հաղորդում են, թէ Պինիոտտին գտել է թոքախտի դէմ մի դեղ, որ առանց վնասելու մարմնակազմին սպանում է Կոխի ձողիկները (թոքախտի բացիլները)։ Անցեալ տարուայ սկզբում այդ դեղով փորձեր են կատարուել ծովախոճկորների վերայ, որոնք միանգամից փառաւոր հետեանքներ են տուել։ Մինչ այդ հիւանդութեամբ բռնուած միւս խոճկորները 40—50 օրից յետ սատակեցին, ներսըսկուած խոճկորները կենդանի մնացին և անդամատելիս՝ գտան, որ թոքախտի բացիլները ոչնչացել էին։ Փորձերն այնպէս որոշ հետեանքներ էին տուել, որ հարկ եղաւ նոյնը մարդկանց վրայ անել։ Հարկաւոր էր ցոյց տալ, որ այդ դեղն անփնաս է և մարդկանց համար։ Ուստի և Պինիոտտին ամենից առաջ այն սրսկեց իր մարմնի մէջ, որ նոյնպէս լաւագոյն հետեանք ունեցաւ։

Հոռովի հիւանդանոցում՝ երիտասարդ քիմիկոսի ասիստէնտներից իմանալով ժողովուրդն սկսեց գունդագունդ դիմել Պինիոտտին և խնդրել, որ նոցա էլ սրսկէ։ Բայց սիրտ չարին փորձեր անել նոցա վերայ, այն ժամանակ թոքախտով հիւանդ երեք զրաշարներ խնդրեցին դր. Բէլլին իրանց վերայ փորձել այդ դեղը։ Դէլլին որոշեց կատարել նոցա խնդիրը։ 2—3 ամսուայ բժշկութիւնից յետոյ զրաշարներն արագ սկսեցին առողջանալ։ Այդ ժամանակ Բէլլին որոշեց փորձերը շարունակել Հոռովի ապաստարաններում, գործարաններում և այլն եղած թոքախտաւոր հիւանդների վերայ, որոնք մեծ մասով թոքախտի ամենածանր տեսակների էին պատկանում, տենդով, գիշերային քրտինքով և խոպոտ ձայնով հիւանդներ, բնակուած վատառողջ բնակարաններում, կիսամերկ և կէս քաղցած դրութեան մէջ։

Զնայելով այս բոլոր խիստ անբարեյաջող պայմաններին,

հիւանդներն արդէն առաջին 10—15 սրսկումներէից յետոյ սկսեցին անհամեմատ լաւ զգալ իրանց:

Այս դեղի պակասութիւնը նորա մէջն է, որ խիստ մեծ չափով պիտի ընդունել մինչև բոլորովին առողջանալը. առանձին ծանր դիպուածներում ստիպուած էին մօտ 200 անգամ ներարկել միտոկոսեան լուծուածքի 4—7 խոր. սանտ. բայց միւս կողմից նա կատարելապէս անվնաս է, ոչ երիկամներին և ոչ գեղձերին չէ վնասում: Առաջին սրսկումներէից յետոյ մի քանի հիւանդներ ջերմում են, իսկ միւսների տաքութիւնն է բարձրանում, բայց հետագայ սրսկումների ժամանակ այս երևոյթներն էլ չքանում են:

Այս դեղով փորձեր կատարուում են Հոովմի Santa spirito հիւանդանոցում պրոֆ. Տաուսիգի ձեռքով, (T. II.)

ՄԱՀԳՈՅԺ

ԱԼԷՔՍԱՆԴՐ ԱՆԱՆԵԱՆ

Փետրուարի 21-ին վախճանուեցաւ Թիֆլիսի ինտէլիգէնտ հասարակութեան լաւ յայտնի Ալէքսանդր Ստեփանեան Անանեանը 87 տարեկան հասակում:

Հանգուցեալը սերում էր Մոսկուայի յայտնի Յոֆմանեանների ընտանիքից, և հղբայրն էր յաւերժայիշատակ Յովհաննէս Յովհանեանի, Թիֆլիսի Մարիամեան-Յոֆմանեան օրիորդաց միջնակարգ դպրոցի հիմնադրի:

Ալէքսանդր Անանեանը Թիֆլիսի վաղեմի հասարակական գործիչներից մէկն էր, որի կեանքի մեծագոյն մասը, կարելի է ասել, անցել է ազգի ծառայութեան մէջ և միշտ ջերմ մասնակցութիւն է ունեցել ազգային գործերին:

Ինքը իւր ուսումը ստացած լինելով Անգլիայում և երկար ժամանակ ապրած Ֆրանսիայում, հմուտ էր այդ երկու լեզուներին և առհասարակ կրթուած մարդ էր երոպական իմաստով: Միւս կողմից՝ ամուսնական կապով կապուած լինելով Կ. Պօլսի նշանաւոր Տատեան ընտանիքի հետ, որի միջոցով մտերմական կապեր ունէր նաև Կ. Պօլսի շատ ինտէլիգէնտ և բարձր դիրք ունեցող ընտանիքների հետ, առաւել նշանակութիւն էր ստանում Ալէքսանդր Ստեփանիչը հասարակական բարձր խաւերում: